

1852

h-56

4997-5005

28

z-56

2010

Uo: 1996

84

1

B 2001



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

4174

78034-U-2-

1247-87



1602 ~~7~~

ՃՐԱԳ

Հ Ո Գ Ի Ո Յ

12012

29

Ես այս եկայ աշխարհ, որ ամէն ո՛վ որ
ինձի հաւատայ, խաւարի մէջ չմնայ :

Յ․Լ․ Ժբ․ 46 :

Ե Ր Ր Ո Ր Դ Յ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼԻՍ

Ի Տ Գ Ե Ր Ը Ն Ի Ե . Գ . Չ Ը Բ Չ Ի Լ Ի

1856

241

0-95

2001

ՃՐԱԳ ԶՈԳԻՒՈՅ

Ես լոյս եկայ աշխարհ , որ ամէն ո՛վ որ
ինծի հաւատայ , խաւարի մէջ չմնայ :

Յովհ . Ժբ . 46 :

Յարգի Բարեկամներ ու Եղբայրներ :

Ներեցէ՛ք ինծի , որ ձեզի քանի մը խրատական խօսքեր զրուցեմ Պօղոս առաքեալին խօսած նիւթին վրայովը , որ կ'ըսէ՝ ք Վարնէ . Ժբ . 5 . “Փորձեցէ՛ք ձեր անձերը թէ հաւատքին մէջն էք . քննեցէ՛ք ձեր անձերը . չէ՞ք գիտեր ինքզինքնիդ , որ Յիսուս Վրիստոս ձեր մէջն է , միայն թէ որ խոտելի չըլլաք” :

Ես խօսքէն կը սորվինք մենք թէ՛ մարդիկները կարելի է որ երբոր հաւատք չունին՝ կը խորհին թէ Վրիստոսի հաւատքին մէջն են . այսինքն՝ մէկ մարդ մը կրնայ իր վրայովը խորհիլ թէ՛ ինքը մէկ հաւատացեալ մըն է , կամ Վրիստոսի հետևող մէկ մըն է , երբոր ինքը ճշմարտիւ անանկ չէ : Ինքը անունով Վրիստոսեայ մը կրնայ ըլլալ , բայց ճշմարիտ Վրիստոսեայ չէ :

Ես կերպ ըլլալը ան խօսքէն ալ շատ յայտնի է , որ Տէրը Սարդիկէի եկեղեցիին առաջնորդին զրուցեց . “Վուն անուն ունիս թէ կենդանի ես ,

ու մեռած ես” : Յայտ . 7 . 1 : “Ասև յայտնի
է Վրիստոսի խօսքերէն , որ կ’ըսէ . “Շատերը
ան օրը ինծի պիտի ըսեն . Տէ՛ր Տէ՛ր՝ չէ՞ որ քու
անունովդ մարգարէութիւն ըրինք , և քու անունովդ
դէներ հանեցինք , ու քու անունովդ շատ հրաշք-
ներ ըրինք : Եւ ան ատենը անոնց յայտնապէս
պիտի ըսեմ , թէ Ես բնաւ ձեզ չէի ճանչնար .
մէկդի՛ գացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը
գործէիք : Սաղմ . 5 . 22 , 23 : Ահա աս զրու-
ցածները ան մարդոցը համար են , որոնք աս
աշխարհիս մէջ կը խոստովանին թէ իրենք
Վրիստոսի աշակերտն են , և կը խորհին թէ
ակերպով հետևապէս փրկութեան ճանա-
պարհին մէջն են : Բայց Վրիստոս անոնք չգիտեր՝
ու չճանչնար որ իրենն են , և ինքը ան օրը
պիտի չխոստովանի թէ անոնք իրենն են : Աւ
ան ատեն անոնք իրենց յոյսէն պիտի զրկուին :
Ո՛հ ի՛նչպէս սոսկալի պիտի ըլլայ աս յուսահա-
տութիւնը , որ մենք ակնկալութիւն ունենանք
մեր բոլոր կեանքին մէջը՝ թէ ընդունելի պիտի
ըլլանք Վրիստոսի առջևը , ու պիտի փրկու-
ինք . բայց վերջը ատանկ անարգութիւնք՝ ու դուրս
ձգուինք իր դիմացէն յաւիտեանս :

Կ’երևայ թէ Պօղոս ալ իր վրայովը քիչ մը վախ
ունէր՝ թէ վերջին օրը Վրիստոսի դիմացէն մէկ
դի պիտի ձգուի . անոր համար կը զրուցէ թէ ,
“Իմ մարմինս կը ճնշեմ” ու կը նուաճեմ , որ
չըլլայ թէ ուրիշներուն քարոզելէս ետև՝ ես ինքնս

խոտելի գտնուիմ” : ան Կորնթ . թ . 27 :

Շատ մարդիկ՝ որ ինքզինքնին Վրիստոնեայ կը կոչեն , կ'երևայ թէ այնչափ էվելօք չեն խորհիր աս նիւթին վրայով . կամ չեն գիտեր որ ինքզինքնին խաբելու շատ վտանգ կայ : Բայց իրացընէ վտանգ կայ : Թէ որ անանկ չէ , ինչո՞ւ համար առաքեալը Կորնթացի Վրիստոնեաները կը յորդորէ որ՝ ինքզինքնին քննեն : Հիմա որովհետեւ կարելի է որ մարդս խաբուի , ինչպէս որ Տէրը մեզի կը զրուցէ որ շատերը խաբուած են և վերջին օրը յոյսերնուն պիտի զրկուին . ասոր համար Պօղոսին խրատին մնաք ալ մտիկ ընենք , և քննենք ինքզինքնիս աղէկ ջերմեռանդութիւնով մը : Չանք ընենք՝ որ ան խնդիրը ստուգենք թէ արդեօք մենք հաւատքին մէջն ենք՝ թէ չէ : Ո՛հ երանի թէ Լն՝ որ մարդուս սիրտը կը քննէ , մեզի օգնէ իր Սուրբ Հոգիովը , որ կարենանք ճշմարտապէս ինքզինքնիս քննել :

Պինտ առաջ նայինք թէ Վրիստոսի հաւատքին մէջն ըլլալը ի՞նչ է . և ամենէն առաջ սա ցուցընենք թէ՛ Սոսկապէս ճշմարիտ կրօնքը խոստովանիլը հաւատքին մէջ եղած ըլլալը չցուցընէր : Կորնթոսի մէջ եղող ժողովուրդը՝ որոնց որ Պօղոս աս խօսքը ըսաւ , իրենք գիտէին և խոստովաներ էին Վրիստոսի կրօնքը . լսեր էին անոնք Լւետարանին քարոզութիւնները նոյն առաքեալէն . բայց տակաւին “խոտելի” ըլլուելու վտանգին մէջն էին : Թէ որ ան ամէն ճշմարիտ կրօնքը

խօստովանողները՝ ու ինքզինքնին Վրիստոնեայ
կանչողները, հաւատքին մէջը եղած ըլլային՝
և անանկով ապահով ըլլային, հարկ չէր անանկ
մարդոցը որ ինքզինքնին քննեն նային :

Երրորդ . Սոսկապէս մկրտուած ըլլալը հա-
ւատքին մէջն եղած ըլլալը չցուցնեն : Կորնթացի
Վրիստոնեաները ամէնքը մկրտուած էին, անոր
վրայ իրենց հարցում մը կամ խօսք մը չկար :
Պօղոս անոնց կը կանչէ թէ՛ ինքզինքնին քննեն
նային, չէ թէ որ մկրտուած են արդեօք, հապա-
որ Վրիստոսի հաւատքին մէջն են : Ուստի կրնայ
ըլլալ որ, մէկ մարդ մը մկրտեալ ըլլայ՝ ու Վր-
րիստոսի հաւատքին մէջը եղած չըլլայ . կրնայ ըլ-
լալ որ մենք մկրտեալ ըլլալովնիս ճշմարիտ Վրիս-
տոնեաներ եղած չըլլանք . կրնայ ըլլալ որ մենք
մկրտեալ ըլլալովնիս՝ տակաւին ապահով եղած
չըլլանք : Թէ որ բոլոր բանը մկրտութեան վրայ
եղած ըլլար, թէ որ մկրտութիւնը ամենէն մեծ բա-
նը եղած ըլլար, առաքեալը ասանկ պիտի չզրուցէր
թէ՛ ինքզինքնիդ քննեցէ՛ք նայեցէ՛ք թէ մկր-
տուած էք :

Երրորդ . Հաղորդութիւն առնելը հաւատքին
մէջ ըլլալը չցուցուններ :

Թէ որ ասանկ եղած ըլլար, Պօղոս պիտի
զրուցէր թէ՛ Հաղորդութիւն առի՞ք :

Չորրորդ . Ես կամ ան եկեղեցիէն ըլլալն ալ
չցուցնեն Վրիստոսի հաւատքին մէջ ըլլալը :
Օր օրինակ՝ շատ անգամ կը լսենք թէ մար-

դիկները կ'ըսեն : Մենք Յունաց եկեղեցիէն ենք ,
 ճշմարտութիւնը միայն մեր քովն է . կամ Մենք
 Ատինացւոց եկեղեցիէն ենք , մերը շիտակ է .
 կամ Մենք Հայկենք , կամ Լնգղիացի ենք :
 Աորնթացւոց մէջն ալ ասանկ եղաւ . ոմանք կ'ը-
 սէին թէ՛ ես Պողոսեան եմ . ոմանք՝ ես Լպողոս-
 եան եմ . ուրիշները՝ ես Պետրոսեան : Բայց Եռա-
 քեալը աս կողմնական հոգիին համար սաստիկ չե-
 խեց անոնք : Ինքը ըսաւ անոնց թէ մարմնաւորէն :

Բանը անոր վրայ չէր՝ թէ իրենք Պետրոսի
 հետեւող են , եթէ Պողոսի , կամ թէ Լպողոսի .
 հապա որ՝ իրենք Վրիստոսի կը հետեւին : Բանը
 անոր վրայ էր որ , իրենք ճշմարտապէս Վրիս-
 տոսի հաւատքին մէջն են՝ թէ չէ :

Հիմա ասոնք մէկ դի ձգենք . գանք մեր ան
 առջի հարցումին՝ թէ , Ինչ է հաւատքին մէջ
 եղած ըլլալը . կը պատասխանեմ թէ՛ Վրիստոսի
 վրայ ճշմարիտ հաւատք ունենալն է , և ճշմարիտ
 Վրիստոնեայ ըլլալ՝ ու Վրիստոսի ճշմարիտ
 աշակերտ ըլլալն է :

Ես մեծ և ամենահարկաւոր խնդիրին վրա-
 յով սխալմունք չունենալու համար՝ երթանք նոյն
 ինքն Վրիստոսին՝ որն որ անսխալելի Ուսու-
 ցիչ մըն է , և իրմէն մէկ պատասխան մը առ-
 նենք : Արբոր ինքը աշխարհիս վրայ էր
 մարմնով , իր աշակերտներուն յայտնի սորվե-
 ցուց թէ՛ ինչ բան հարկաւոր էր իրեն աշա-
 կերտ ըլլալու համար : Ինքը սորվեցուց անոնց՝

որ աս նիւթին վրայով ռիսալմունքներէն զգուշ
 ըլլան : Ինքը բոլոր մարդիկ պարտաւորեց՝ որ
 զգուշ ըլլան ինքզինքնին իր աշակերտները ըլլալ
 խոստովանելէն, և այնպէս խորհելէն՝ երբոր ճըշ-
 մարտապէս անանկ չեն :

Իր կանոնը՝ որ մեզի տուաւ, ասիկայ էր .
 «Թէ որ իս կը սիրէք իմ պատուիրանքներս պա-
 հեցէք : Են որ իս չսիրեր, իմ խօսքերս չպահեր» :
 Յով. Ժ. 15 . 24 : «Թէ որ մէկը իմ ետեւս
 դալ կ'ուզէ, թող իր անձը ուրանայ, և իր խաչը
 վերցունէ՝ ու իմ ետեւս գայ» : Մատթ. Ժ. 24 :

Ես տուած կանոնը պարզ ու դիւրաւ միտք տու-
 նելու է . տղայ մըն ալ կրնայ հասկընալ աս . քան-
 զի մէկ ծառայ՝ մը որ ճշմարտապէս կը սիրէ իր
 տէրը, իրաւամբ պիտի ջանայ՝ որ անոր կամքին
 հաճոյ եղածը ընէ : Հնազանդ պիտի ըլլայ անոր
 զրուցածներուն, և հաւատարիմ պիտի ըլլայ ա-
 նոր ստացուածքին վրայ : Եւ մէկ տղայ մը՝ որ իր
 ծնողքը կը սիրէ, բնականապէս և կամաւորապէս
 անոր կը հնազանդի, ու անոր ուղածին պէս
 կ'ընէ : Թէ որ մենք տեսնանք մէկ տղայ մը կամ
 մէկ ծառայ մը անհնազանդ գտնուած, իսկոյն կը
 մակարեբնէք որ անոնք սէր չունին :

Ուրեմն եկէք՝ քիչ մը մտմըտանք մենք Վրիս-
 տոսի ան գլխաւոր պատուէրներուն վրայ, և տես-
 նանք թէ՛ մենք կը պահենք անոնք՝ թէ չէ : Եւ
 աս կերպով մենք կարող պիտի ըլլանք որոշելու՝
 թէ ճշմարտապէս իր աշակերտն ենք թէ չէ :

ւն . Ըն պատուէրներուն մէկը՝ որ Յիսուս լե-
 ոանը վրայ իր տուած քարոզներուն մէջը զրուցեց ,
 ասի . “Ընաջ խնդրեցէք Ըստուծոյ թագաւորու-
 թիւնը և անոր արդարութիւնը” : Մատթ . 5 .
 33 : Ըս խօսքը կը ցուցնէ մեզի որ՝ մեր առաջին
 ու գլխաւոր ջանքերնիս կամ փափաքնիս աս պիտի
 ըլլայ , որ խնդրենք Ըստուծոյ թագաւորութիւնը
 մտնալ . կամ ուրիշ կերպով խօսիմ , երկինքը
 երթալու համար պատրաստ գտնուիլ : Մեր փր-
 կիչը ան խօսքով պայծառապէս ու որոշաբար
 սորվեցուց , որ մարդու հոգին անմահ է . որ
 ան պիտի մնայ մինչև յաւիտեան կամ Արկինքին
 մէջը՝ կամ Վժռիքին մէջը . և աս հոգին է՝ ա-
 նիմանալի էակ մը՝ և մարմինէն աւելի պատուա-
 կան : “Քանզի ինչ կը շահի մարդ մը՝ թէ որ բո-
 լոր աշխարհը վաստըկի , և իր անձը կորսնցընէ” :
 Մատթ . 6 . 26 :

Մեր միտքը մեզի կը սորվեցունէ թէ՛ մենք
 պարտինք պինտ առաջ և գլխաւորապէս ա-
 մենահարկաւոր բաներուն ետեէն լինալ . Չոր
 օրինակ , մարդու աւելի հարկաւոր է մէկ մար-
 գըրիտի մը վրայ հոգ ունենալ քան թէ երկաթի
 կտորի վրայ : Աւելի հարկաւոր է մէկ մարդու մը
 կեանքը ազատել քան թէ մէկ ճնճղուկի մը կեան-
 քը : Հիմա ամէն մարդ կրնայ իմանալ թէ՛ աւելի
 հարկաւոր է ամենեւին չմեռնող հոգիին աղէկ
 ըլլալուն համար խնամք տանիլ , քան թէ մար-
 մինին , և աւելի հարկաւոր է ազատել մէկ աշխարհ

մը՝ բան թէ մէկ անհատ մը : Այլ որովհետեւ
 Վրիստոս մեզի ասանկ յայտնի զրուցեց որ, հոգին
 ան կենդանի ներգործող էակը ամենեին պիտի
 չմեռնի . և ասոր համար մէկ աշխարհէ մը ա-
 ւելի արժէք ունի ան . և որովհետեւ մենք անանկ
 միտք ունինք, որով կրնանք որոշել թէ ո՛րը պատ-
 ուական՝ և ո՛րը անարգ է . առանց մէկ յատուկ
 պատուէրի մըն ալ յայտնի է աս բանը որ՝ պէտք է
 մեզի մեր հոգիներուն փրկութիւնը փնտրուել ա-
 նանկ՝ մեծափափաք փութով մը՝ որ մարմինին ապրիլը
 փնտրելնէս՝ կամ աշխարհիս բարութիւնները վաս-
 տրկելու համար ըրած ջանացողութիւններնէս ա-
 ւելի ըլլայ : Ուստի ո՛րչափ աւելի պայծառ է աս,
 որ ինքը կը պատուիրէ մեզի թէ . “Առաջ խընդ-
 րեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և անոր ար-
 դարութիւնը” : “Չանք ըրէք որ նեղ դռնէն
 մտնէք” : Վճ . ԺԳ . 24 : Այլ որ ինքը բացա-
 յայտ կերպով կրկին և կրկին մեզի կը հասկը-
 ցունէ թէ մեր հոգիները կորսուելու մեծ վտանգի
 մէջն են , “Անշուք դռնէն ներս մտէք , ինչու որ
 լայն է ան դուռը՝ ու ընդարձակ ան ճամբան , որ
 դէպ ’ի կորուստ կը տանի . և շատուոր են անոնք՝
 որ անկէ կը մտնեն : Ինչու որ նեղ է ան դուռը՝ ու
 նեղուածք է ան ճամբան , որ դէպ ’ի կեանք կը
 տանի . և քիչուոր են անոնք որ զանիկայ կը գըտ-
 նեն” : Մատթ . Է . 13 , 14 :

Արդ աս բանին մէջ մենք ինքզինքնիս քըն-
 նենք նայինք . մենք մեր հոգիներնուս փըր-

կութիւնը մէկ հարկաւոր բանի մը պէս փնտրու-
լու ետեւէ կ'ըլլանք :

Աւարդացող, քու գլխաւոր հոգդ է՞ որ քու յա-
ւիտենական երջանկու թիւնդ ապահովապէս ձեռք
ձգած ըլլաս : Դուն մարմինէդ աւելի հոգիիդ վրայ
կը խորհիս : Եւ մէն բանէն առաջ Աստուծոյ թա-
գաւորութիւնը կը խնդրես :

Սիրելիք, մէջբնիս արդեօք հարիւրէն մէկ
մարդ մը կը գտնուի՞, որ աս պատուերին հնազան-
դի, ափսոս, կը վախնամ թէ չկայ :

Իսիստ շատ մարդիկներ չեն իմանար, թէ ի-
րենք անմահ հոգի ունին. և ա՛ս ալ շատ քիչ
գիտեն՝ որ իրենց հոգին յաւիտեանս կորսուելու
վտանգին մէջն է : Արբօր մէկ մարդ մը հիւանդ
է՞ ու նեղութեան մէջ, և կը վախնայ թէ ինքը
մեռնելու վրայ է, բան մը կ'ընէ. շուտով մէկը
կը խրկէ բժշկին, ու դեղ կ'առնէ :

Եսանկ ալ անշուշտ՝ թէ որ դուք գիտէք՝ ու կը
հաւատաք, որ ձեր հոգին հիւանդացած է, ու յա-
ւիտենական մահուան վտանգին մէջն է, օգնութիւն
ընելու համար պէտք է որ Հիսուս Քրիստոսին
երթաք՝ ան մեծ ու մէկ հատիկ վարպետ բժշկին,
որ ձեզի փրկութիւն ըլլայ : Բայց ո՞րչափ քիչ են
անոնք որ աս ըսածիս պէս իրենց պարտք սեպեն
հոգւոյն փրկութեանը վրայով հոգ ունենալը : Ար-
չափ քիչ են անոնք՝ որ Քրիստոսի աս պատուերին
հնազանդին, ու ամէն բանէն առաջ Աստուծոյ թա-
գաւորութիւնը և անոր արգարութիւնը կը խնդրեն :

Բայց սիրելիս՝ թէ որ աս բանին անհնազանդ ըլլանք, ի՞նչպէս կրնանք իր աշակերտները ըլլալ:

Է. Քրիստոսի միւս պատուէրը իր աշակերտներուն աս էր որ, իրենք մէկզմէկ սիրեն. “Նոր պատուիրան մը կուտամ ձեզի՝ ըսաւ ինքը, որ մէկզմէկ սիրէք”: Յովհ. ԺԳ. 34: Եւ աս փոխադարձ սէրն էր՝ և ոչ ուրիշ մէկ բան մը, որ բոլոր աշխարհին պիտի ցուցնէր թէ՛ անոնք ճշմարտապէս իր աշակերտներն էին, և թէ՛ իր կրօնքը ճշմարիտ էր: Բանզի ինքը ըսաւ. “Նսով ամէնը պիտի գիտնան՝ թէ իմ աշակերտներս էք, թէ որ իրարու վրայ սէր ունենաք”: Քրիստոս իր անոնց համար ըրած աղօթքին մէջը ասանկ ըսաւ, “Որպէս զի մէկ ըլլան՝ ինտոր որ մենք մէկ ենք... որպէս զի աշխարհս հաւատայ՝ թէ դուն խրկեցիր զիս”: Յովհ. ԺԷ. 11, 21:

Ուստի հիմա մենք՝ որ Քրիստոնեայ կը կոչուինք, տեսնանք թէ ճշմարտապէս մէկզմէկ կը սիրենք աս պատուիրանքին համաձայն: Հրէաներն ու Տաճկները մեր սէրը տեսնալով կ'իմանան թէ մենք Քրիստոսի աշակերտներն ենք: ու աս պատճառաւ մեր Արկնաւոր Հայրը կը փառաբանեն: Ենոնք կը զըուցեն՝ ինչպէս ժամանակ մը Հեթանոսները կ'ըսէին նախնի Քրիստոնէից համար, “Տեսէք ինտոր աս Քրիստոնեաները մէկզմէկ կը սիրեն”: Բայց ընդհակառակը անոնք մեր իրարու դէմ ատելութիւն ունենալը չեն տեսնար:

Յոյները Ատիներուն դէմ հակառակութիւն

ունենալով, և Ատինները Հայերուն դէմ հա-
կառակախօսութիւն ընելով, իրարու վրայ ար-
համարհութիւն ու ատելութիւն չեն ցուցըներ:

Ուստի անոնք Վրիստոսի աշակերտներ կըր-
նան ըլլալ, որ ասանկ ատելութիւններ կ'ունենան
իրարու դէմ, և ասանկ՝ անհաւատներուն հայհոյանք
խօսելուն պատճառներ կ'ըլլան:

Ասանկով կրնան ըլլալ անոնք Վրիստոսի հա-
ւատքին մէջը, կամ թէ անոնք Վրիստոսի աշա-
կերտներն են:

Այլ չէ թէ միայն զանազան եկեղեցիներէ եղող
Վրիստոնեաները մէկգմէկ կ'ատեն աս կերպով,
հապա նաև մի և նոյն եկեղեցիէ եղողներն ալ աս
կերպով մէկգմէկու թշնամութիւն կամ վնաս կ'ը-
նեն: Ուրեմն նոյն բանը ճշմարիտ է հիմա ալ,
որուն համար Պօղոս գանգատ կ'ընէր Երբեմն
Կորնթացիներուն, ու կ'ըսէր, «Աղբայր եղօրը
հետ դատի կը մտնայ, ան ալ՝ անհաւատներուն
առջևը»: Խ Կորնթ. զ. 6: Աս բանին համար
առաքեալը կը յանդիմանէ անոնք՝ ըսելով. «Ին-
չո՞ւ մանաւանդ դուք անիրաւութիւն չէք կրեր.
ինչո՞ւ մանաւանդ դուք զրկանք չէք քաշեր: Հա-
պա դուք անիրաւութիւն ու զրկանք կ'ընէք, և
ան ալ եղբայրներուն»: Խ Կորնթ. զ. 7, 8:

Սեր Տէրը պատուիրեց թէ՛ «Մէկգմէկ սիրեցէք
ինտոր որ ես ձեզ սիրեցի»: Յով. ԺԵ. 12:
Արդարև՝ ինքը իր ժողովուրդները այնչափ շատ
սիրեց, մինչև որ իր կեանքը անոնց համար մեռնե-

լու դրաւ : Յովհաննէս առաքեալն ալ աս խօսքին վրայ մեզի կը զըուցէ թէ՛ “Մենք ալ պարտաւոր ենք մեր եղբայրներուն համար դնել մեր կեանքը” : Ինչ . Գ . 16 : Հիմա՛ աս բանը ընելու յօժարութիւն ունինք մենք : Մեր եղբայրներուն համար նեղութիւն քաշելու կամաւոր ենք : Կամ ընդհակառակը անոնց նենգութիւն չենք ըներ , և մեր անձին օգուտներուն համար անոնց սուտ չենք խօսիր :

Թէ որ ասանկ է՝ մենք կրնանք Վրիստոսի աշակերտներն ըլլալ :

Եսկէց՛ի զատ ան մեզմէ պահանջուած սէրը անկեղծ և անխարդախ պիտի ըլլայ : Ըն նոյն սէրը սոսկ վայելուչ խօսքերու մէջ և զուարթերես դէմքի մը վրայ հաստատուած պիտի չըլլայ , հապա պէտք է որ ըլլայ ներսը սրտին մէջ հաստատուած , ինչպէս կ'ըսէ Պետրոս առաքեալը . “Սուրբ սրտով մէկզմէկ պինտ սիրեցէք” : Կ . 22 :

Երդ՝ որչափ շատ անգամ կը լսենք մենք՝ որ մէկ մարդ մը կը խոստովանի թէ ինքը մեծ սէր ունի ուրիշին վրայ , երբոր իր սրտովը անիկայ կ'ատէ : “Նրենց ընկերներուն հետ խաղաղութիւն կը խօսին , բայց սրտերնուն մէջը չարութիւն կայ” : Սաղ . ի՞նչ . 3 :

“Մրդեակներս՝ կ'ըսէ Յովհաննէս առաքեալը , չէ թէ խօսքով ու լեզուով (մէկզմէկ) սիրենք , հապա գործքով ու ճշմարտութիւնով” : Ինչ . Գ . 18 :

ք . Մեր Տերօջը պատուէրներուն մէկն ալ աս է . «Սիրեցէք ձեր թշնամիները» : Մատթ . Ե . 44 : «Ղսեր էք որ ըսուեցաւ . Քու ընկերդ սիրես , ու թշնամիդ ատես : Բայց ես ձեզի կ'ըսեմ . Սիրեցէք ձեր թշնամիները . օրհնեցէք ձեզ անիծողները . բարի ըրէք անոնց՝ որ ձեզ կ'ատեն , և աղօթք ըրէք անոնց համար որ ձեզ կը չարչորկեն ու կը հալածեն» : Մատթ . Ե . 43 , 44 :

Վիւրիւն բան է սիրել անոնք՝ որոնք որ մեզ կը սիրեն . բայց դժուար բան է մեզ ատողները սիրել : Սակայն որչափ դժուար ալ ըլլայ ասանկ պատուէր մը , մենք անոր հնազանդելու ենք : Քրիստոս ինքը անանկ ըրաւ . և ամէն մարդիկ պէտք է որ անանկ ընեն , որ իր աշակերտները ըլլան : Պետրոս առաքեալ կ'ըսէ թէ՝ «Ղասն զի ի՞նչ գովութիւն կ'ըլլայ ձեզի , թէ որ մեզք գործելով ծեծուիք՝ ու համբերէք . հապա թէ որ բարիք գործելով չաչարուիք՝ ու համբերէք , ասիկայ Լստուծոյ քով շնորհք մըն է : Քանզի դուք աս բանիս համար կանչուեցաք , որ Քրիստոս ալ ձեզի համար չարչարուեցաւ , ու ձեզի օրինակ թողուց՝ որ իր շաւիղներուն հետեւիք» : Թ . Պի . ք . 20 , 21 :

Հիմա՝ Քրիստոնեայ կարգացող , դուն աս բանին մէջ իր քայլերուն կը հետեւիս , եթէ քեզի կանոն ըրեր ես քեզ սիրողները միայն սիրելու , և քեզ ատողները ատելու : Արդ դուն կը նախատուիս՝ դուն ալ անոնք կը նախատես : Քեզ ա-

նիծողներուն փոխարէն՝ դուն ալ անոնք կ'անիծես :
 Ինքը այսպէս չըրաւ՝ որ ամենուն Տէրն էր ,
 հապա իր հալածիչներուն համար աղօթք ը-
 րաւ , և առաջին Քրիստոնեաները աս կերպով իր
 ճամբային կը հետևէին . ինչպէս Պօղոս կ'ըսէ .
 'Արբոր մեզ կը բամբասեն՝ կ'օրհնենք , երբոր կը
 հալածեն՝ կը համբերենք . երբոր գէշ կը լաօսին՝
 կ'աղաչենք : Խ Կորնթ . դ . 12 , 13 : Եւ ուրիշ
 տեղ Պօղոս շատ յայտնի կերպով կը պատուիրէ
 մեզի , "Օրհնել՝ ու մի անիծել" : Հռոմ . ԺԲ . 14 :
 Ուրեմն թէ որ մենք Քրիստոսի և անոր առաք-
 եալներուն օրինակին չհետևինք , և անոնց պա-
 տուէրներուն չհնազանդինք՝ մենք ճշմարիտ Քր-
 իստոնեայ չենք :

Հիմա մենք ամենքնիս քննենք մեր վար-
 քերնիս : Չէ՞ որ մենք գրեթէ ամէնքս մեծ
 ու պզտիկ՝ մեր թշնամիները կ'ատենք ու կ'ա-
 նիծենք : Մենք մեզի դէմ եղած անիրաւու-
 թիւններուն ներողութիւն կու տանք : Թէ որ
 մարդ մը մէկ օրը եօթը անգամ յանցանք ը-
 նէ , Քրիստոսի պատուէրին և իր տուած օ-
 րինակին համեմատ անոր կը ներե՞նք : Ու-
 րիշները մեր անձին պէս կը սիրե՞նք . զոր օրինակ
 ուրիշ եկեղեցիէ եղողները կը սիրե՞նք : Եւ թէ
 որ մենք անոնք կը սիրենք ալ՝ չէ՞ որ Տաճկըները
 ու Հրէաները կ'ատենք : Հիմա սիրելիք , մեզի
 պէտք որ ամէն մարդ սիրենք , ու ամենուն աղէ-
 կութիւն ընենք : Մեզի պէտք է որ ամէն մար-

դոց համար աղօթք ու աղաչանք և խնդրուածք ընենք Աստուծոյ . ինչու որ ան է մեր Փրկիչ Աստուծոյ առջևը աղէկ ու ընդունելի : Տէս Գաղ . 4 . 10 . և Թ 1 թ . 1—3 :

4 . Քրիստոսի մէկ ուրիշ պատուէրն ալ աս է , “Ամէն ինչ որ կ’ուզէք՝ թէ մարդիկ ձեզին ընեն դուք ալ անոնց անանկ ըրէք . քանզի աս է օրէնքը ու մարգարէները” : Սաղմ . 12 :

Աս է Պօղոսին ըսած սերը , որ օրէնքին լրումն է : Սաղմ . 10 : Աս է օրէնքին ան երկրորդ մեծ պատուէրը՝ որ մեզմէ կը պահանջէ ըսելով . “Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս” :

Արանի՛ թէ ամէն մարդիկ աս պատուէրը իրենց սրտերուն մէջը անջնջելի կերպով մը գրելու ըլլային , ու անոր պէս երթալու ըլլային . և ան ատենը ինչ մէկ երջանիկ աշխարհ մը պիտի ըլլար աս աշխարհը : Ալ թէ որ Քրիստոնեաները աս պատուէրը բռնէին , ինչ մէկ երջանիկ ընկերութիւն մը ունեցած պիտի ըլլային իրենք : Ալ անատեն բոլոր ատելութիւնը նախանձութիւնը , չարութիւնը , բարկութիւնը , չարախօսութիւնը , ստութիւնը , ամբարտաւանութիւնը , գողութիւնը , պղծութիւնը , և այլն , ասոնց բոլորը վերջ պիտի ըլլար : Ալ ան ատեն պիտի չըլլար մէկզմէկու դէմ խարէութիւն ընել , անէծք խօսիլ , ու զրկանք կամ թշնամութիւն ընել : Ալ ամէն մարդ իր ընկերին վրայ վստահ պիտի ըլլար՝ ճշմարիտ

ու հաւատարիմ բարեկամի մը պէս՝ և ամէնքը եղբօր պէս մէկզմէկ պիտի սիրէին :

Անմարդը՝ որ ճշմարտապէս իր ընկերը կը սիրէ, իր ջանքովը ամէն բանի մէջ անոր ժամանակաւոր ու յաւիտենական բարութիւնը նայելու ետեէ կ'ըլլայ, և կ'ախորժի աս բանը ընելու. մինչև անգամ անոր համար ինքզինքը նեղութեան մէջ ձգւելու և իր անձը ուրանալու կ'ըլլայ : (Թէ որ դուք հիմա իս սիրելու ըլլաք ձեր անձին պէս, ուրախութեամբ պիտի աշխատիք իմ օգուտս առաջ բերելու, չէ թէ միայն ժամանակաւոր՝ հապա նաև իմ հոգևոր օգուտս : Այս որչափ որ իմ անվախճան հոգիս աւելի պատուական է մարմինէս, ու իմ մարմնաւոր բարութիւններէս՝ և աս բոլոր աշխարհէս, այնչափ աւելի պէտք է որ դուք աշխատիք թէ որ իս կը սիրէք, իմ հոգւոյս բարութիւնը ամէն ինձի վերաբերեալ բաներէն աւելի փնտուելու : Ղուք յօժարութեամբ ձեր բոլոր ջանքովը իմ փրկութիւնս ապահով ընելու պիտի աշխատիք, և պիտի յօժարիք աս բանը ընելու, ինչպէս որ մեր օրհնեալ Տէրը մարդոց որդիներուն վրայով ունեցած իրմեծ սիրոյն համար հաճեցաւ անոնց իր ողորմութիւնը ցուցընել, և մինչև անգամ ինքզինքը խաչին վրայ մեռնելու տուաւ անոնց համար : Այս ինչպէս որ մէկ բարի ու բարեգութ հայր մը համբերութեամբ ու կամաւ յանձնառու կ'ըլլայ աշխատելու ցորեկ ու գիշեր մէկ սիրելի զաւկի մը համար,

այսպէս դուն ալ կ'արդացող՝ թէ՛ որ իս կը սիրես ,
 ուրախութեամբ կրցածիդ չափ իմ մարմնաւոր ու
 յաւիտենական աղէկութեանս համար ջանք պիտի
 ընես : Աւ որովհետեւ իմ անվախճան հոգիս հա-
 ջար անգամէն աւելի իմ մարմինէս պատուական է ,
 դուք պիտի ջանաք նմանապէս աւելի անոր փրկու-
 թեանը համար՝ քան թէ իմ մարմնաւոր առողջու-
 թեանս համար : Թէ՛ որ կը տեսնաք ձեր ընկերը
 կամ բարեկամը՝ տգէտ կամ հոգւոյն պէտք եղածը
 հոգալու ճամբէն դուրս ելած , աս ձեզի շատ աւելի
 նեղութիւն պիտի տայ , քան թէ անոնք հիւանդ
 կամ ցաւոտ՝ կամ մէկ մարմնաւոր նեղութիւն մը
 քաշած տեսնալը : Վուք պիտի ջանաք ամէն կեր-
 տով արթընցունել անոնք իրենց անհոգութենէն ,
 և առաջնորդել անոնց ճշմարտութեան ու կենաց
 ճամբան . պիտի աղաչէք անոնց՝ որ Մատուծոյ
 հետ հաշտուին . ինտոր որ Պօղոս կը զրուցէ Վո-
 ընթացիներուն . «Քրիստոսի կողմանէ ձեզի կ'ա-
 զաչենք , հաշտուեցէ՛ք Մատուծոյ հետ» : ք
 Կորնթ . ե . 20 :

Աւ ձեր սէրը պիտի առաջնորդէ ձեզի ջեր-
 մեռանդ աղօթք ընել Մատուծոյ անոնց համար :
 Ամէն մարդ՝ որ իր ընկերը ճշմարտապէս կը սի-
 րէ , ասանկ պիտի ընէ , չէ թէ միայն իր
 բարեկամներուն ու ազգականներուն համար ,
 հապա բոլոր մարդոց , մինչև անգամ իր թշնա-
 միներուն ալ :

Պօղոս ինքը աս կերպով ըրաւ , և կ'ըսէ թէ՛

“Յոյներուն ու Քարբարոսներուն, իմաստուններուն ու անմիտներուն ալ Վարտական եմ” :
Հովհ. Թ. 14 :

Թէ որ մէկ մարդ մը հարցընելու ըլլայ՝ ո՛վ է իմ ընկերս, մենք պիտի պատասխանենք ան որ մեր Տէրը սորվեցուց մեզի երբոր կը խօսէր ան մարդուն վրայով որն որ գողերուն ձեռքը ինկած վնասուեր էր, ու մէկ Սամարացիի մը հոգ տանելովը աղէկ դարման ընդուներ էր : Եսկից կ’երևայ որ մարդոցմէն ո՛ր և իցէ մէկը՝ որ կը կարօտի մեր գթութեանը ու բարութեանը, մեր ընկերն է, թէպէտ ինքը մէկ օտար մը և մէկ այլազգի մը ըլլայ, և որ մեզի պէտք է ամէն մարդոց աղէկութիւն ընել ո՛ր և իցէ ազգէ ըլլայ՝ որչափ որ ձեռքերնուս կու գայ : Ասա միտքովն է առաքեալին ան խօսքը որ կ’ըսէ . “Արդ՝ կ’աղաչեմ ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն ամէն մարդոց համար : Ինչու որ ան է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Եստուծոյն առջևը, որ կ’ուզէ թէ ամէն մարդիկ փրկուին՝ ու ճշմարտութիւնը ճանչնալու գան” : Թ. Տ. Թ. 1, 3 :

Հիմա մենք ինքզինքնիս աս բանին մէջը քննենք նայինք թէ, մենք որ Վրիստոնեայ կոչուած ենք՝ աս կերպով կ’երթանք : Արջանանք ու աղօթք կ’ընենք ուրիշներուն աղէկութեանը համար : Ամթ թէ աս բանին համար բոլորովին փութաջան ենք : Մենք որ մեր Վրիստոնեայ եղբայրներուն փրկութիւնը չենք հոգար, ո՛ր մնաց ուրիշներունը, ինչ-

պէս են շեթանոսները և շրէաները: Մենք
անոնց համար աղօթք չենք բնեք, ոչ մեր եկե լեցի-
ներուն մէջը ոչ ալ մե, տունները, հապա մանա-
ւանդ անոնք կ'ատենք: Ար ես ան մտոգիկները,
որ աղօթք ընեն Տաճարն բուն և շրէաներուն ու
շեթանոսներուն հօտար:

Հիմա՛ թող ամէն ինչ ք' ու կ, կարգայ ասոնք,
ինքիրմէն դատէ իր առձր աս անոնո՞վը, թէ ինք
անանկ կ'ընէ՞ ուրիշներու ինչպէս որ ինքը
կ'ուզէ որ ուրիշները իրեն բնեն, և ասկից ինքը
թող իմանայ թէ՛ արդեօք Քրիստոսի աշակերտն
է ինքը:

Ե, Սեր Տէրը նաև պատուէրը ուսաւ իր
աշակերտներուն՝ ըսելով թէ՛ Վ. մենքին երգում
մի՛ ընէք, ո՛չ երկնորի կրայ՝ որ Վ. տու՛նայ աթոռն
է, և ո՛չ երկրի վրայ՝ ու անոր ոտքերուն պա-
տուանդանն է, ո՛չ ալ Աչրուսա և Սի վրայ՝ որ մեծ
Թագաւորին քա աքն է: Եւ ո՛չ քու գլխուդ
վրայ երգում ընես, ինչպէ՛ս որ Սի կրնար մէկ յազ
մը ճերմըկցունել կամ սեղուել: Հապա ձեր
խօսքը ըլլայ պոն՝ յո, և ոչ՝ ո՛չ, ու ասկէ
աւելին՝ չարէն առաջ կ'ուսու: Մ. և Ե 34—37:

Արդ՝ ինքզինքնիս քոնեք և պիտեք աս պատուէ-
րին վրայ, թէ մենք՝ որ Քրիստոսի աշակերտները
կը կոչուինք, Քրիստոսի աս խօսքերուն կը հնա-
զանդի՛նք՝ թէ չէ: Չէ որ ամէն ատեն մենք աս
պատուէրը ոտքի տակ կ'ատենք: Մենք չենք
լսեր որ յարգիկ՝ էօիկ յարգ ու կնիկ յարգ և

տղաքները, ամէնքն ալ աս պատուէրը գրեթէ ամէն ժամանակ ոտքի տակ կ'առնեն՝ չեն բռներ : Բան մը ծախու առած կամ ծախած ատեննին՝ և կամ խօսակցութեան մէջ առանց երգումի չեն անցնիր, անանկ որ՝ ճամբան կամ մեր տուներուն մէջը կամ ուր տեղ որ ենք, ուրիշ բան չենք լսեր այնչափ շատ՝ որչափ որ կը լսենք Աստուծոյ անունը զուր տեղ առնելու խօսքերը : «Այս շատ մարդիկներ ալ սովորութիւն ըրած են իրենց ամէն խօսքերնին զրուցել երգում ընելով աչքերնուն կամ գլուխնուն վրայ . և կամ իրենց կեանքին՝ և ուրիշ կերպ բաներու վրայ, որ անոնց ամէնը Վրիստոսի աս երեւելի պատուէրին դէմ բաներ են, որ կ'ըսէ . «Ամենեին երգում մի՛ ընէք» :

Ուստի հիմա մենք՝ որ մեր բերանը այսչափ շատ անգամ երգումներ ընելու սովորութիւն ըրած կը գտնանք, ալ ի՞նչ պիտի խօրհինք մեր վրայ : Կրնա՞նք ըսել թէ՛ մենք Վրիստոսի աշակերտներն ենք, երբ որ իրեն աս պատուէրը չենք բռներ :

Եսկէց ՚ի զատ ո՞ւր թողունք որ, շատ մարդիկ շատ անգամ չէ թէ մինակ երգում կ'ընեն, հապատուտ տեղն ալ երգում կ'ընեն : Սուտ կը զրուցեն, ու ետքն ալ երգում կ'ընեն թէ խօսածնին ճշմարիտ է : Ստութեան մեղքը անգամ մը կը գործեն, ու ետքը՝ դարձի գալու և անոր համար Աստուծմէ ներում խնդրելու տեղը, կը դառնան Ստերգմնու-

Թեան մեղքին մէջն ալ կ'իյնան՝ մարդոց աչքին առջևէն իրենց ստուծիւնը ծածկելու համար :

Եփսոս , կը կարծե՞ն ատ մարդիկը թէ առտ խօսելով և երդում ընելով , ու ասանկով մարդիկները խաբելով կրնան ան Մենամեծ Եստուածը խաբել , որ ինքը կը քննէ անոնց գործքերը ու իրենց սրտին մէջիւնները , և ամէն քան դատաստանի մէջ յայտնի պիտի ընէ : Կամ թէ ամենեկին հոգերնին չէ՞ , թէ Եստուած ի՞նչ կը խորհի արդեօք իրենց վրայ . կամ ի՞նչ սարսափելի փոխարէն մը պիտի տրուի իրենց ան ըրածներուն դէմ գալու աշխարհին մէջը :

Չ . Մեր Տէրը պատուիրեց իր աշակերտին ձեռքովը թէ՛ «Ստուծիւնը մէկ դի ձգելով , ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ» : Եւրեմ . ք . 25 :

Հիմա եկէ՛ք մենք ինքզինքնիս քննենք աս առաքելական խօսքերուն վրայ թէ՛ մենք աս պատուէրը կը բռնե՞նք : Ո՛ր են ան մարդիկը որ միշտ ճշմարտութիւն խօսին , անանկ որ մենք իրենց խօսքին վրայ կրնանք հաստատուիլ : Հարիւրին մէջը մէկը կ'այ արդեօք , որ ազատ ըլլայ ստուծեան մոլութենէն : Ո՛ր է ան մարդը՝ որ աւելի ճշմարտութիւն խօսելուն վրայ խորհի՞ քան թէ քանի մը ստակ աւելի վաստրկելու վրայ :

Եստուծոյ խօսքը չ'ին ու՛ , որ կտակարանին մէջը յայտնապէս կը սորվեցունէ մեզի թէ ամէն ստուծիւն ու խաբէութիւնը չէ թէ միայն գէշ է ,

Հապա որ անտարակոյս մարդը կործանման կը տանի :

Դաւիթ Սաղմօսին ժէ գլխուն մէջը կը սորվեցունէ թէ , անոնք՝ որ պիտի բնակին Լստուծոյ Սուրբ լեռանը վրայ , (այսինքն՝ որ պիտի մտնան իր թագաւորութեանը մէջ ,) անանկ մըն են՝ որ սրտերնուն մէջ ճշմարտութիւն կը խօսին : Ալ է գլխուն մէջ կը զրուցէ՝ թէ Լստուած պիտի դատապարտէ ան ամէնը՝ որ սուտ կը խօսին : Ալ Յայտնութեան գիտքին մէջ ան տեղ ուր որ ան Սուրբ Քաղաքին Արկնաւոր Արուսաղեմին վրայով կը խօսի , Յիսուս Քրիստոս կը զրուցէ թէ . «Քոյոր ստախօսներուն բաժինը վառած լիճին մէջը պիտի ըլլայ կրակով ու ծծումբով , որ աս է երկրորդ մահը» :

Արեմն թո՛ղ ամէն ասիկայ կարգացողը կանկ առնէ աս տեղ , ու թո՛ղ մտմտայ թէ ինքք սովորութիւն ըրած չէ՞ աս մեղքը գործածելու . և թէ որ ինքք ունի , անոր համար վտանգի մէջ չէ՞ որ իր բաժինը կրակէ լիճին մէջը պիտի ունենայ :

Է . Քրիստոսի պատուէրներուն մեղմէ պահանջած մէկ ուրիշ անն ալ աս է որ մարդիկները՝ «Պէտք է որ հօգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն (Լստուծոյ)» : Յովն . Դ . 24 :

Սեր Տէրը սորվեցուց , որ , ստակապէս լեզուին ըրած փառաբանութիւնն ու ձայնաւոր աղօթքը բաւական չէ . և աս կեանք լեզուով պաշօն մատուցանելը Լստուծոյ մեղուելի չէ : Ալ ինքք

սաստիկ կշտամբեց Հրէաները՝ անոնց աս կերպ
լեզուով ու չէ թէ սրտանց ծառայութիւն ընել-
նուն համար . ըսելով թէ՛ . Եղէկ մարգարէու-
թիւն բրաւ ձեր վրայ Ասային՝ ու ըսաւ . Ես
ժո ովուրդը միայն շրթունքներովը զիս կը պատուէ .
բայց իրենց սիրտը հեռացած լատուած է ինձմէ .
ու պարապ տղը զիս կը պաշտեն , մարդոց պա-
տուիրած բաներս իբրև վարդօպետութիւն սոր-
վեցունելով” . Սատու . ԺԵ . 8 . 9 :

Թէ որ Եստուած մեյի պէս ըլլար , կարելի է
որ սոսկ արտաքին երկրպագութիւններով ինքը
կշտանար , ու անոնք իրեն բուսական սեպէր .
բայց ինքը մեյի պէս չէ , անիկայ մարդուն սիրտը
կը նայի : Եստուած մէկ հոգի մըն է . և ինքը
մեյմէ հոգիով եղած եր րպագութիւն կ’ուզէ :
Սեր ըրած պաշտօնը քսին ծառայութիւնովը
պիտի ըլլայ . ան մէկ հոգիւր ծառայութիւն մը
պիտի ըլլայ :

Այլեւ եցիներուն մէջը ըստ մեծի մասին ի՞նչ
պէս երկրպագութիւններ ու պաշտօններ կ’ըլ-
լան : Այլ երկրպագութիւն ըրած ժամանակ-
նիս ներսիցին ևս կ’իմաստնէք թէ մենք ան մեծ
և ահաւոր Եստուած անջեր կայներ ենք . որ
սիրտերնիս “ միւքերնիս կը քննէ : Ենոր առ-
ջեր կեցնէր եւք , կա Եստուած կ’ուզէք յարգութիւ
նով ու աստուծոյ պաշտօն ձեւ երկիւղովը : Սեր
զրուցած աղօթքը ոգով ու քով է : Այլիսա-
ւորապէս մեր հոգը ու կ’ըլլայ որ մեր սիրտերը

մաքուր ու սուրբ ըլլան , և մեր զրած երկրպագութիւնը հոգևոր ու ընդունելի եղած ըլլայ Մատուծոյ առջևը : Կամ թէ աւելի մեր ջանքը ու հոգը չըլլար որ , ան ինչևիցէ արարողութիւնը որ պիտի ընենք՝ շուտով լմնցունենք տեղերնիս երթանք : Եւ շատ անգամ երբոր եկեղեցիին մէջ կը ժողովուինք , և Մատուծոյ ներկայութեան առջևը կ'ըլլանք աղօթքի ժամանակ , արդեօք աչքերնիս չորս կողմերնիս չենք ձգեր ու նայիր . և մեր քովիններուն հետը խօսակցութիւն ըներ՝ ու իրարու հագուստներուն վրայ նայիր , անանկ որ ամենևին հոգերնիս չըլլար թէ Մենամեծ Մատուծոյ առջևն ենք , և չենք նայիր թէ՛ սրտերնիս շիտա՞կ են թէ չէ : Եւ երբոր Աւետարանը կը կարդացուի , մենք լսողներս՝ արդեօք աղէկականջ կը դնե՞նք անոր՝ որ Մատուծոյ խօսքն է , ու չէ թէ մարդու խօսածը : Ան խօսքերէն մենք սորվելու կը նայի՞նք թէ ինչ է Մատուծոյ կամքը , ինչ է մեր պարտաւորութիւնը , և ինչ պէտք է ընել մեզի որ փրկուինք : Եւ երբոր տուներնիս կ'երթանք աս կամ ան մարդուն ըսածը կամ ինտոր հագուած ըլլալը յիշելնուս աւելի ան լսած Մատուածային ազդարարութիւններնիս միտքերնիս կը բերե՞նք :

Երբոր մեր աղօթքը զրուցելու կ'ըլլանք , ինչպէս անհոգութիւնով ու արտորնօք կ'ըսենք անիկայ , չխորհելով մեր ըսածներուն զօրութեանն ու իմաստին վրայ , հապա կը կարծենք թէ՛ մի-

այն մեր շատ խօսելովը աղօթքնիս պիտի լսուի :
Մատթ . 7 . 7 :

Եւ ասկէց 'ի զատ, գուցէ ան ժամանակը սիրտերնիս ատելութիւնով, նախանձութիւնով, չարութիւնով և այլն, լեցուած են, և ասանկով մեր աղօթքները ընդունելի կ'ըլլա՞ն Աստուծոյ, որ ինքը մեզմէ կը պահանջէ աղօթք ընել իրեն մեր պարտականներուն վրայ ներող սրտով մը :

Մեր Տէրը մեզի պատուիրեց նաև որ ծածուկ աղօթք ընենք՝ ըսաւ, «Ղուն երբոր աղօթք կ'ընես, մտիր քու ներքին սենեակդ, ու դուռդ գոցէ, և քու շօրդ՝ որ գաղտուկ տեղ կը գտնուի, աղօթք ըրէ . և քու շայրդ՝ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ» : Մատթ . 7 . 6 :

Ո՞րչափ մարդիկ կան արդեօք, որ գաղտուկ աղօթք ընելու սովորութիւն ունին . կամ որ կը սիրեն իրենց սենեակին մէջ մինակ ըլլալ օրը մէկ ժամ՝ կամ կէս ժամ, սիրտերնին Աստուծոյ առջևը բանալու, մեղքերնին անոր առջևը խոստովանելու, և իրմէն թողութիւն խնդրելու համար . փառք տալով իր անունին, և կարգալով Աւետարանը ու լսելով իր սրբազան խօսքերը :

Իայց առաջին սուրբերը սովորութիւն ունէին գաղտուկ աղօթք ընելու . ինչպէս որ Ղաւիթ՝ որ ինքը Տէրոջը օրէնքներուն վրայ կը հաճէր, կը զրուցէ թէ՛ «Իրիկունը՝ առտուն ու կէս օրը պիտի բողբեմ ու հառաչեմ, և անիկայ պիտի լսէ իմ

ձայնս” : Սողմ . ծե . 17 : “()ըը եօթը անգամ կ'օրհնեմք քեզ Տէր քու արդար դատաստանիդ համար” : Սողմ . ՃԺԺ . 164 : Ղանիէլ մարգարէն ալ սովորութիւն ունէր իր սենեակը մտնալ օրը իրեք անգամ, և աղօթք ընել երկնից Աստուծոյն : Եւ մեր Տէր Յիսուսն ալ իր մարդեղութեանը ժամանակը կը սիրէր առանձին աղօթք ընելը . ուստի մեզի ալ պէտք է որ ամասին մէջ իր օրինակին հետեւինք :

Ղանիէլ ան որ առանձին աղօթք ընել չսիրեր, չկրնար ինքը մէկ հոգևոր մարդ մը ըլլալ . ոչ ալ ինքը Աստուծոյ երկրպագութիւն ըրած կ'ըլլայ հոգիով ու ճշմարտութիւնով :

Սակայն Աստուած չէ թէ միայն աղօթքի ժամանակ մեզմէ կը պահանջէ անկեղծութիւն և ուղղութիւն սրտի . հապա ամէն ժամանակ մեզի պէտք է չար խորհուրդներէն ու ամէն կերպ սըրտէն անցած մեղքերէն զգուշանալ : Ինչու որ ինքը մեր սիրտերը կը քննէ ամէն ժամանակ, և չէ թէ միայն սոսկ մեր աղօթք ըրած ատենը :

Եւ Աստուծոյ աչքին առջևը “Ո՛վ որ իր եղբայրը կ'ատէ, մարդասպան է” : Եւ “Ո՛վ որ կնիկ մարդու կը նայի անոր ցանկանալու համար . անկէայ ալ իր սրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ” : Ափսո՛ս ուրեմն . մեր մէջը՝ որ Վրիստոնեաներ ըսուած ենք, ո՛րչափ մարդասպաններ ու շնացողներ կան : Սենք կ'ուզենք որ մարդիկ մեր վրայ աղէկ կալծիք ունենան, և ինքզինք-

նիս արտաքին երևոյթքով արդար մարդոց պէս
ըլլալ կը ցուցնենք . բայց սրտին Բաքրութեանը
համար հոգերնիս չըլլար՝ ու ան չենք փնտրուեր :
Սեր Տէրը ասանկներուն կը զրուցէ, “Վայ ձեզի,
որ կը նմանիք ծեփած գերեզմաններու, որոնք
դուրսէն դեղեցիկ կ'երևան և ներսէն մեռելներու
ոսկորներով և ամէն կերպ պլծութիւնով լեցուն
են” : Սաղմ . իգ . 27 :

Ը . Վրիստոսի պատուէրներուն մէկ ուրիշն ալ
աս է, “Վիրքերը քննեցէք, ինչու որ դուք
անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանքը ու
նենալ” : Յովհ . ե . 39 :

Հին ու “Նոր կտակարանները որ Սուրբ Վիրք
կ'ըսուին, Մտուծոյ կամքին յայտնութիւնը կը
պարունակեն իրենց մէջը : Այլ կան անոնց մէջը ան
կանոնները, որոնցմով որ պէտք է մեզի վարուիլ .
և անանկ խրատներ կան, որոնց մեր փրկութեանը
համար պէտք է մեզի որ հետեւինք : Ընոր համար
մեզի աւելի հարկաւոր է՝ որ Սուրբ Վիրքերուն
մէջը եղած ամէն բաները գիտնանք :

Ամէն քաղաքի մարդոցը հարկաւոր է որ գիտ-
նան թէ որոնք են ան իրենց վրայ եղած իշխա-
նութեանը օրէնքները, որ իրենք ալ կարենան ան
օրէնքին պահանջածին պէս ընել, ու անոր ար-
գիլած բաներէն զգուշանալ : Այլ երբոր քաղաքին
մէջը հրատարակութիւն մը կ'ըլլայ կառավարու-
թեան կողմանէ, ամէն մարդ պէտք է որ լսէ՝ ու
հնազանգի ան պատուէրը քարոզողին, անանկ

որ իբր թէ թագաւորն ինքն է՝ որ կը քարոզէ ան պատուէրը : Եւ թէ որ մէկ մարդ մը մտիկ չընէ հասկընալու ան պատուիրած բանը , իր ան պատուէրին վրայով տգիտութիւնը կրնայ զինքը օրէնքին անհնազանդ գտնուած ատենը անմեղադիր ընել . չէ՛ , քա՛ւ լիցի : Ինքը անշուշտ յանցաւոր եղած է՝ չէ թէ միայն օրէնքը չբռնելուն համար , հապա նաև թագաւորին իշխանութիւնը արհամարհելուն համար :

Արդ՝ թագաւորներուն թագաւորը ու տէրերուն Տէրը իմացուց մարդոց իր կամքը Սուրբ Գիրքին մէջը . և ինքը կը պահանջէ մեղմէ որ մենք ան Սուրբ Գիրքը քննենք , որով կարենանք գիտնալ իր կամքը՝ և կատարել ան իր պատուէրները : Եւ թէ որ մեր ժամանակաւոր թագաւորին հրովարտակը հասկընալ հարկ է մեզի , հապա ո՛րչափ հարկաւոր է որ մենք գիտնանք Սուրբ Գիրքին մէջի պարունակուած խօսքերը . որովհետև անոնք Ամենամեծ թագաւորին հրամաններն են , որ ինքն է միայն Ամենակարող Արարիչ՝ ու երկնի և երկրի Առաւիարը . և որովհետև մեր հոգիներուն գոթութիւն կրակէն խալսիլն ալ՝ իր կամքը գիտնալուն ու կատարելուն վրայ կապուած է : Ու իր կամքը կատարելապէս գիտնալը՝ միայն աս Սուրբ Գիրքէն կրնանք ունենալ :

Ուստի նայեցէ՛ք հիմա՝ տեսէ՛ք մարդոցը գործքերը Սուրբ Գիրքին վրայով . ի՞նչպէս անհոգ եղած են սորվելու աս պատուական Գիրքը : Ո՛ր-

չափ քիչուր են՝ որ կը կարդան ու կը քննեն
 աս Գիրքը: Եւ անոնք՝ որ չեն կրնար կարդալ,
 որչափ քիչ կ'աշխատին սորվելու, կամ ա-
 նանկ մէկ մը գտնալու՝ որ կարդայ ու բացատրէ
 իրենց ան Սուրբ Գիրքը: Ու երբոր եկեղեցիին
 մէջ Լստուծոյ խօսքը կը կարդացուի, անոր
 ջերմեռանդութեամբ մտադրութիւն ընողները ո՞ր-
 չափ քիչ են:

Եւ պատճառաւ խիստ շատ մարդիկներ չեն
 դիտեր թէ ինչ գրուած կայ Լստուածաշունչ
 Սուրբ Գիրքին մէջը:

Ճշմարիտը խօսելով մեզի արժան չէ որ աս
 կերպը ըլլայ: Յիսուս Վրիստոս պատուիրեց մեզի
 որ Սուրբ Գիրքը քննենք: Ուստի անոնք՝ որ հոգ
 չեն ըներ Լստուածաշունչը կարդալու ու քննելու,
 Վրիստոսի աշակերտները ինտո՞ր կրնան ըլլալ:

Ո՛հ, ո՞րչափ տարբեր է աս մեր գործածած
 կերպը Գաւիթին ան խօսքէն՝ որ կ'ըսէր Լստուծոյ,
 «Ո՞րչափ կը սիրեմ քու օրէնքդ. ան է ամէն օր
 իմ մտածութիւնս: Ո՞րչափ քաղցր է քու խօս-
 քըդ իմ քմացս, մեղրէն աւելի անուշ է իմ բերնիս:
 Ինձի հազարաւոր ոսկիէ ու արծաթէ աւելի աղէկ
 է քու բերնիդ օրէնքը: Վու խօսքդ իմ ոտքե-
 բուս ճրագ է, ու իմ շաւիղներուս լոյս: Եւ որ
 համար քու պատուիրանքներդ ոսկիէն՝ ու ազնիւ
 ոսկիէն աւելի սիրեցի»: Սող. ՃԺԹ. 72, 97,
 103, 105, 127:

Եւ ասանկ սիրով Գաւիթ սիրեց՝ ու սոր-

վեցաւ Աստուծոյ խօսքերը : Աւ ասանկ պէտք է
ամէն Վրիստոնէին որ սիրէ ու սորվի Աստուծոյ
պատուէրները , եթէ ինքը ան Տէրօջը աշակերտն
է , որն որ կ'ըսէ , "Վիրքերը քննեցէ՛ք . ինչու
որ դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական
կեանքը ունենալ" :

ՆԵՏԵԻՈՒԹԻՒՆ :

Առջի երեսներուն մէջը Տէր Յիսուս Վրիստո-
սին մէկ քանի պատուէրներուն վրայ քննութիւն
ըրինք . և անոնք բազդատելով մեր վարքին ու
սովորութիւններուն հետը՝ որ իրեն աշակերտները
կոչուած ենք , գտանք մէկ աղէտալի աննմանութիւն
մը :

Կ'երևայ թէ մենք որ Վրիստոնեայ կը կոչուինք
Վրիստոսի պատուէրներուն չենք հնազանդիր .
ուրեմն հիմա մենք ինքզինքնիս կրնանք քննել
Առաքեալին տուած խրատովը , և կրնանք ստուգիւ
հաստատել թէ մենք հաւատքին մէջն ենք , և թէ
Յիսուս Վրիստոս մեր մէջն է , կամ թէ մենք
դատապարտուած ենք :

Կ'արդացող՝ Ակո՛ւր ես քեզի հարցունեմ . թէ
դուն Վրիստոսի աս պատուէրները՝ որոնց վրայ որ
խօսուեցաւ մինչև հոս , կը բռնե՞ս : Թէ որ չէ՛ ի՛նչ
պիտի խորհիս դուն ք և վրայովդ . յայտնի է որ՝
դուն Վրիստոսի աշակերտը չես , և ճշմարիտ
Վրիստոնեայ չես , հապա անունով միայն : Ասանկ

քեզի պէս եղողներուն դէմ մեր Տէրը կը զըռուցէ .
 “Ինչո՞ւ զիս Տէ՛ր Տէ՛ր՝ կը կոչէք , ու ըսած
 բաներս չէք կատարեր” :

Ըստուծոյ պատուէրները մեզի տրուած են՝ որ
 մենք անոնց հնազանդինք . թէ որ մենք անոնք
 կ'անարգենք ու չենք հնազանդիր Վրիստոսի ,
 յոյս մը կրնա՞նք ունենալ թէ ինքը մեզ պիտի փրկէ՞
 չէ՞ . Վանզի Վրիստոս ինքը եղաւ հեղինակ յաւի-
 տենական փրկութեան . որո՞նց , ան ամէնուն՝ որ
 իրեն կը հնազանդին . ուրեմն միայն անոնք որ
 իրեն կը հնազանդին կրնան փրկուիլ : Ա՞յ . է .
 Ծ : Ըսանկ նաև ըսաւ Սոփսէս՝ Վրիստոսի դա-
 լատեանը վրայ առաջուց խօսելովը , “Այ պիտի
 ըլլայ թէ ամէն ով որ ան Սարգարէին մտիկ
 չընէ , պիտի կորսուի ժողովուրդին մէջէն” :
 Կոր . Գ . 23 :

“Ով որ աս իմ խօսքերս կը լսէ ու չկատարեր ա-
 սոնք , կը նմանի անխելք մարդու մը՝ որ իր տու-
 նը աւազի վրայ շինեց . և անձրևները իջան , ու
 գետերը վաղեցին , ու հովերը փչեցին , և զարկին
 ան տանը , ու փլաւ , և մեծ էր անոր կործանու-
 մը” : Սոփ . է . 26 , 27 :

Ուրեմն աստեղ մէկ աւելի երկիւղալի հե-
 տուութեան մը հասանք . ալ եկէ՛ք կանկ առ-
 նենք՝ ու մտմտանք ասոր վրայ : Ըլ յայտնի ե-
 ղաւ որ շատ մարդիկ՝ ինքզինքնին Վրիստոնեայ
 կանչելով բոլորովին զօրկ են եղեր ճշմա-
 թիտ Վրիստոնէութենէն , և Վրիստոսի կրօն-

քին պէս չեն երթար : Աւ շարունակ աս վի-
ճակին մէջը կենալով անկարելի բան է իրենց
փրկութիւն գտնալը : Սոսկալի բան չէ՞՝ երբոր
խորհինք թէ մենք և ուրիշ շատ մարդիկ որ
Վրիստոնեայ կը կոչուին , աղօթք կ'ընեն ,
պահք կը բռնեն , սուրբ տեղուանքը ուխտի կ'եր-
թան , և այլն , բայց Տէր Յիսուս Վրիստոսին
պատուէրները չեն բռներ : Աւ աղէտալի բան
չէ՞ որ կը սեպենք թէ մենք թագաւորութեան որ-
դիք ենք . բայց երբոր սրբութեան կշառքովը կըշ-
ուուինք պակաս կը գտնուինք , և անանկ ըլլալով
կործանման ճամբուն մէջն եղած ենք :

Բայց թէ որ , մէկը հարցունէ թէ ի՞նչ կըր-
նանք ընել : Աս իրեն պատասխան կու տամ
Պետրոս առաքեալին խօսքերովը , “Ուստի ա-
պաշխարեցէք՝ ու դարձի՛ եկէք , որ մեղքերնիդ
ջնջուի ,” : Վարժ . ք . 19 : Այսինքն պէտք է
որ մենք մեր ամէն մեղքերէն ու բոլոր կեղծա-
ւորական արարողութիւններէն դառնանք , ար-
տաքին նշաններովը շարժինք , հապա ինքզինք-
նիս նայինք որ ճշմարիտ ու հնազանդ սրտով Տէր
Յիսուս Վրիստոսի քալած ճամբուն ետեէն եր-
թանք . և իրմէն սորվինք ան խօսքը՝ որ կ'ըսէ՝
“Այլէք ինձի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ ,
և ես ձեզ պիտի հանգչեցնեմ : Իմ լուծս ձեր վը-
րայ առէք , և ինձմէ սորվեցէք որ հեզ եմ ու
սրտով խոնարհ , և ձեր անձերուն հանգստութիւն
պիտի գտնէք” : Ասե ինքը կը զրուցէ , “Թէ որ

մէկը կ'ուզէ իմ ետեւէս գալ, թո՛ղ իր անձը ուրանայ, և ամէն օր իր խաչը վերցունէ (այսինքն ամէն իժիր Քրիստոսի համար իր քաշած նեղութիւնը) ու իմ ետեւէս գայ” :

Բայց աս զիւրին բան չէ . մարդ մը թող չխորհի՝ թէ կրնայ իր խաչը վերցունել, ու Քրիստոսի ետեւէն երթալ, թէ որ Աստուծոյ Հոգին իրեն չօգնէ, և թէ որ կատարելապէս իր սիրտը շնորոգուի . իրաւցունէ՝ պէտք է որ սիրտը նորոգուի : Որովհետեւ բոլոր աս խաբէութիւնները յառաջ կուգան մէկ խանգարեալ չար սրտէ մը . ինչպէս որ Յիսուս ըսաւ՝ թէ “Սրտէն կ'ելլան չար խորհուրդներ, սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, չար աչք”, և այլն : Աւինչպէս որ անկարելի բան է որ ապականեալ և ծառ մը աղէկ պտուղ բերէ, անանկ ալ անկարելի է՝ որ մէկ խանգարեալ սիրտ մը աղէկ սուրբ հնազանդութեան պտուղներ յառաջ բերէ : Ամէն մարդ աշխարհ կը ծնանի մէկ ապականեալ գէշ սրտով մը, որ հակամիտութիւն ունի բոլոր գէշ սովորութիւններու և հակառակ է բոլոր աղէկ բաներու, ասանկ ինքը կը մնայ մինչև որ իր սիրտը նորոգուի, և ինքը ըլլայ Առաքեալին ըսածին պէս “Մէկ նոր ստեղծուած մը” Հոգւոյն Սրբոյ զօրութիւնովը :

Աս նոր ստեղծուած ըլլալը ան է՝ որ մեր Տէրը հասկըցուց աս խօսքով, “Ի՞նչ որ մէկ մարդ մը նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնալ” : Ահա հոս է ան մեծ ու զօրաւոր

փոփոխութիւնը որ պիտի ըլլայ մէկ մարդու մը ներսիդին փրկութեան համար : Եւ փոփոխութեանը վրայ շատ անգամ խօսուած է Սուրբ Վրբին մէջը . որ աս երբեմն կ'ըսուի մէկ նորոգութիւն մը . ինչպէս, «Չեր մաքին նորոգութեամբը նորոգուեցէք» : Լուկ . ԺԷ . 2 . Երբեմն կ'ըսուի մէկ նոր ծնունդ մը , որ անով Տէնք Եստուծոյ որդիքը կ'ըլլանք . ինչպէս, «Որոնք որ (Վրիստոս) ինքը ընդունեցին՝ անոնց իշխանութիւն տուաւ Եստուծոյ որդիներ ըլլալու որ անոնք ո՛չ արիւնէ և ո՛չ մարմնի կամքէ՝ ո՛չ ալ մարդու կամքէ , հապա Եստուծմէ ծնան» : Յու . Թ . 12 . 13 : Եւ փոփոխութիւնը կը բաղդատուի նաև մեռելներուն յարութեանը . ինչպէս , «Եւ ձեզ որ ատեն մը յանցանքներու մէջ մեռած էիք , կենդանացուց անոր հետը : Թաղուելով անոր հետ մկրտութիւնով , օրով նաև անոր հետ յարութիւն առիք Եստուծոյ զօրութեանը հաւատալով» : Կորն . Ժ . 12 , 13 :

Ուրեմն յայտնի է որ՝ մէկ մարդու մը անանկ փոխուիլը որ մէկ նոր արարած մը՝ ու ճշմարիտ հնազանդութեամբ Վրիստոսի հետևող մը ըլլայ , մէկ մեծ փոփոխութիւն մըն է : Եւ աս կերպ փոխուիլը մարդուս կարողութենէն բոլորովին դուրս բան մըն է : Ես՝ մարդուս ներսիդին անանկ փոփոխութիւն մըն է , որ առանց Եստուծոյ Հոգիին զօրութեանը չկրնար ըլլալ : Եսոր համար դուք թէ որ կ'ուզէք ձեր սրտին աս հոգեւոր նորոգու-

Թեանը փորձը ընել, պէտք է որ ինքզինքնիդ Աստուծոյ յանձնէք՝ աղօթքով իրմէն խնդրելով, որ իր Սուրբ Հոգին ձեզի խրկէ՝ միտքերնիդ լուսաւորելու՝ ու սրտերնիդ նոր ընելու : Աս կերպովը Ղաաիթ աղօթք ըրաւ՝ երբոր ինքը մեղքի մէջ ինկած էր, որ իմացաւ թէ ինքը զորութիւն չունէր ինքզինքը խալսելու՝ կամ իր սիրտը մեղքի արատներէն մաքրելու . խնդիրք ըրաւ Աստուծոյ՝ ըսելով, «Ո՛վ Աստուած՝ իմ մէջս մաքուր սիրտ ըստեղծէ՛, և իմ ներսիգիս ուղիղ հոգի նորոգէ՛ : Սաղմ . Ծ . 10 :


Աստուած ալ իր ողորմութեամբը խոստացեր է տալ իր Սուրբ Հոգին իրմէն խնդրողներուն : Ասիկայ է իր բոլոր բարութիւններուն ամենէն մեծը՝ որ Տէր Յիսուս խոստացաւ իր աշակերտներուն : Աս է ան մեծ բարութիւնը՝ որ կ'երևայ աս պատուական խօսքերուն մէջ . «Խնդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի . փնտռեցէք՝ ու պիտի գտնէք . դուռը զարկէք՝ և պիտի բացուի ձեզի : Ձեզմէ ո՞վ է ան հայրը՝ որմէն իր բոլոր հաց որ ուզէ, միթէ քնար պիտի տայ անոր . կամ թէ որ ձուկ ուզէ, միթէ ձուկին տեղը օձ պիտի տայ անոր : Ուստի եթէ դուք՝ որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, որչափ աւելի ձեր Հայրը Արկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը խնդրեն» : Ալ մնեք իրաւունք ունինք ապաւինելու ու քաջութեամբ յուսալու աս աստուածային խոստմանը նայելով, որ ինքը կը խրկէ

մեզի ալ ան Սուրբ Հոգին աղօթքով խնդրած աւտեննիս , ինչպէս որ ինքը Պէնտէկոստէին օրը իր աշակերտներուն խրկեց , երբոր իրեք հազար հոգի ան Հոգիին զօրութիւնովը սրտերնուն մէջ մէկ նորոգութիւն մը ստացան , որ իրենց մեղքերնէն ետ դարձան՝ ու ճշմարիտ հաւատացեալներ եղան Վրիստոսի :

Նմանապէս ո՞վ որ կը խնդրէ խոնարհ աղօթքով աս օրհնեալ պարգևը՝ պիտի առնէ ան :

Կարգացող՝ աս կերպով ահա դուն կրնաս ըլլալ ճշմարտապէս “Նոյն հաւատքին մէջը” . և ասանկով պիտի ըլլաս արդեամբ ու ճշմարտապէս Վրիստոսի աշակերտը : Որուն կը վսյլէ փառք ու պատիւ և փառաբանութիւն յաւիտեանս . Ամէն :

ՎՆԲԳ,



4997 - 5005

2013

